Արձանագրություն N 3

<< ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԱՊԱՐԱՏ/ՓՔՎ/2022-35>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք.Երևան **26. 05.2022թ.**

ՀՀ ոստիկանության կարիքների համար **թվային լուսանկարչական ապարատների** ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԱՊԱՐԱՏ/ՓՔՎ/2022-35** ծածկագրով ընթացակարգի նիստում արձանագրվեց՝

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԱՊԱՐԱՏ/ՓՔՎ/2022-35 ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցներից **"ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ" ՍՊԸ-ի** ներկայացրած հայտերում առկա էին անհամապատասխանություններ /հավելված 1-ում՝ տեխնիկական բնութագրում լրացված չէր հրավերով պահանջվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագիրը: Ինչպես նաև ներկայացված հավելված 1.1-ում՝ դիմում-հայտարարությունում բացակայում էր էլեկտրոնային ստորագրությունը, իսկ հավելված 1.2-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ներկայացված չէր/:

24.05.2022 թվականին մասնակցին տրվել էր մեկ /1/ աշխատանքային օր, անհամապատասխանությունները շտկելու համար: **"ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ" ՍՊԸ-ի** կողմից **չի կատարվել անհամապատասխանությունների շտկում**:

Հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի **45-րդ կետի, ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԱՊԱՐԱՏ/ՓՔՎ/2022-35** ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից՝ **"ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ" ՍՊԸ-ի** հայտը ենթակա է մերժման, 5 աշխատանքային օրվա ընթացքում փաստաթղթերը կուղարկվեն Լիազոր մարմին՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԱՊԱՐԱՏ/ՓՔՎ/2022-35 ծածկագրով գնման ընթացակարգը **1-ին** չափաբաժնով **համարվում է չկայացած**:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝

ոստիկանության գնդապետ Լ. Սաֆարյան

Հանձնաժողովի անդամներ՝

ոստիկանության փոխգնդապետ Ա. Սարգսյան

ոստիկանության փոխգնդապետ Ա. Մելքոնյան

Քարտուղար՝

ՀՀ ՔՀԾ 1-ին դասի առաջատար ծառայող Լ. Սահակյան